

ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում վերապատրաստում Շվեդիայի տեխնոլոգիայի թագավորական ինստիտուտում (2019թ. փետրվարի 18-22)

2019թ. -ի փետրվարի 18-22-ը ERASMUS+ BOOST ծրագրի շրջանակներում 24 մասնակիցներ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի Ամերիկյան, Շիրակի պետական, Վանաձորի պետական համալսարաններից, Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայից, ՀՀ Կրթության և գիտության նախարարությունից և Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից, ինչպես նաև եվրոպական գործընկերներ բուհերի ներկայացուցիչներ մասնակցեցին Շվեդիայի տեխնոլոգիայի թագավորական ինստիտուտում կայացած վերապատրաստմանը:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանից մասնակցել են ՇՂՀ Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն Հովիկ Մելքոնյանը, նույն կենտրոնի արտաքին կապերի պատասխանատու Ասյա Հարությունյանը, ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի վարիչ Էլվիրա Զարգարյանը և Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս Վահրամ Մուրադյանը:

Վերապատրաստման հիմնական նպատակն էր հայկական բուհերի ներկայացուցիչներին ներկայացնել հաջողակ ծրագիր գրելու և ներկայացնելու գործիքները, ինչպես նաև միջազգային ուսանողների հավաքագրման քաղաքականությունը, իրականացվող քայլերը:

Հայկական համալսարանները վերապատրաստման ընթացքում ներկայացրեցին ծրագրի գաղափարներ, որոնք հյուրընկալող համալսարանի ներկայացուցիչների հետ քննարկելով՝ կազմեցին ծրագրի նախնական սևագիր տարբերակ՝ հետագայում զարգացնելու և ներկայացնելու դրամաշնորհային հայտում:

Վերապատրաստումներին հաջորդեց նաև ծրագրի համակարգման հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները, ինչպես նաև ծրագրի հետագա գործողությունների շրջանակը:

[Training agenda](#)

[Minutes Coordination Meeting](#)







